'ի թագաւորական քաղաքի անդ, վասն օրէնդրութեան Արքայի՝ (Նիզամի ճէտիտ), և միաբանեալ եէնիչէրի զորաց բարձին յԱթոռոյ զՍուլթան Սէլիմ Գ. եւ եդին 'ի տեղի նորա զՄուստաֆա, և ոմանք 'ի նախարարաց մատնեցան 'ի սուր, որոց խոստացեալ էր տալ Ցունաց զժառանգութիւնն Հայոց։ Եւ 'ի ժամանակի խռովութեանս յայսմիկ մեկնեցաւ Պօղոս վարդապետ 'ի Զմիւռնիա 'ի գործ Նուիրակութեան։ Առաքեցան յերուսաղէմ Մարկոս Եպիսկոպոս և Մկրտիչ վարդապետ Մեղրիկ։ Եւ զկնի անցանելոյ աւուրց ինչ գայր հասանէր յՈւռուսչուխ Մուստաֆա Փաշայ, այր հզօր և անպարտելի. 'ի խորտակել զդրունս Արքունեաց՝ խեղդեցաւ Սէլիմ Արքայ յիւրոց, էջ և Սուլթան Մուստաֆա յԱթոռոյն։ Ամբարձաւ 'ի գահ Կայսերութեան Օսմանեան եղբայր նորին Սուլթան Մահմուտ Բ. այր զգօն և արդարակորով՝ յաջողակ յամենայն գործս Կայսերական կառավարութեան, յորմէ սարսեալ դողայր ապստամբ և ստահակ խումբ եէնիչէրեաց։ Սորա սեղանաւորք՝ և Գաբուտան Փաշայի՝ ծանօթ էին Ցարութիւն և Ցակոբ Հայկազն յարգելիք, որք և ծանուցին ըզխնդիրն Մուստաֆա Փաշայ մեծի Վէզիրին, և նա խոստացաւ կարգաւորել զինդիրն յերուսաղէմ ըստ նախնական սովորութեան։

ԳԼՈՒԽ Ի.

Խռովութիւն այլազգեաց Երուսաղէմի։ Հաշիւ Ս. Աթոռոյն։ Միաբանութիւն Հայոց ընդդէմ Ցունաց։ Քաղաքական դէպք։ Հրդեհ 'ի տաճարին Ս. Յարութեան։

Եւ եղեւ ընդ աւուրսն ընդ այնոսիկ կարգեցաւ կուսակալ Դամասկոսի Կէնճ Եուսուֆ Փաշայ, որոյ համբաւ գործոցն հասեալ յերուսաղէմ, սարսեցոյց զբնակիչս, առաւել եւս զվանականս, զի 'ի գալստեան նորին՝ բանային դրունք մեծամեծ ծախուց և տուգանաց. զի թէպէտեւ յառաջագոյն խնդրեալ էին յատուկ Կառավարիչ Երուսաղէմի՝ որպէս դրեցաք, այլ չեղեւ յաջողութիւն այնմ 'ի